

ԽԱՐԲԵՐՂՑԻՆ

Քիւրտ՝ առաւել հայ. կ'ընէ քրտահայ:

Քրտահայ՝ առաւել բողոքական. կ'ընէ քրտահայ բողոքական:

Քրտահայ բողոքական՝ առաւել քիւրտ. կ'ընէ խարբերոցի:

*

Խարբերոցին մեծանձն է: Մեծ է մտքով, խօսքով, հնարքով եւ քիթով, այսինքն՝ մեծամիտ, մեծաբան, մեծահնար ու մեծաքիթ է:

Հակառակ *ֆրոնտէիք* չըլլալուն՝ հազցուր իրեն քիւրտի տարագ մը, անցուր գլխուն փաթեցոց մը ու կ'ունենաս կատարեալ շէյխ Սըմկօ մը: Մերկացո՛ւր: Եւ այս անգամ հազցուր սեւ զգեստ, ճերմակ շապիկ ու օձիք, սեւ փողկապով ու կ'ունենաս պատուելի մը կամ մեռելաբարձ մը:

Տերսիմի բարձրաբանդակ քարտեւը ունենալ ուզող մը կրնայ լուսանկարել խարբերոցիի մը դէմքը, երբ մանաւանդ ան բարկացած է:

*

Ամենուն համար Ամերիկան նոր աշխարհն է, իսկ խարբերոցիին համար Ամերիկան հին աշխարհն է: Կ'ըսեն, թէ Գոլոմպոսի գիւտէն առաջ խարբերոցիները Միսիսիփիի եւ Միսուրիի ափերէն գաղթած ու եկած հաստատուած են Մուրատ գետին մօտերը՝ կառուցանելով խար անուն բերդը: Խարբերոցիներու մեծ մասը ժամանակի ընթացքին վերադարձած է իր բուն ծննդավայրը՝ Ամերիկա:

*

Խարբերոցին, հակառակ հում «քեօֆթէ» ուտելուն, եփած մարդ մըն է եւ մարդ եփելու կամ խաշելու մէջ բաւական համբաւ կը վայելէ:

*

Մեր ազգին մէջ խարբերոցին նշանաւոր անդամ մըն է: Չկայ գրեթէ խարբերոցի մը, որ անդամ չըլլայ կուսակցութեան մը, հայրենակցականի մը, միութեան մը: Աշխարհական անդամութեամբ յաճախ չի բաւականանար խարբերոցին ու կ'ըլլայ նաեւ կոծնա-բարոյական անդամ՝ պատկանելով քրիստոնէութեան, հայ եկեղեցւոյ, կա-